№ 9 Յունվարի 21 (Փետրվարի 2) 1881 Յունվարի 21 (Փետրվարի 2) № 9

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ.

Ստորագրողներից սիսում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ-ին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆեյլիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 ռուբլ, կէս տարվան 6 ռ., հինգ ամս. 5 ռ., չորս ամս. 4 ռ., երեք ամս. 3. ռ. երկու ամս. 2 ռ. և մի ամս. 1 ռուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի հայ կանայք։—Ներքին տեսութիւն։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Հակահրէական շարժում Գերմանիայում։

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԿԱՆԱՅՔ

Հեռուից, գաւառներից լսում ենք որ Թիֆլիսի հայ կանայք շատ ազգասէր են, շատ գործունեայ են, շատ եռանդոտ են, շատ գործ են կատարում ազգային և հասարակական ասպարիզում։

Բայց մենք, տաս տարուց աւելի ապրելով Թիֆլիսում, շատ լաւ ենք տեսնում, որ մեր հայ տիկինների և օրիորդների այդ բոլոր արժանաւորութիւնները կատարելապէս կեղծ են և երեւակայական։

Իսկապէս Թիֆլիսի հայ կինը ամենաանշարժ, անտարբեր էակ է դէպի ամեն հասարակական և ազգային գործ։ Թիֆլիսի հայ կինը և օրիորդը իր ոգով, դաստիարակութեամբ, լեզուով հայ չէ. ամբողջ օրը՝ թէ ընտանիքում և թէ հասարակութեան մէջ հայուհին օտար լեզուով է խօսում իր շրջապատողների հետ, երբէք նրա բերանից չէք լսի մի խօսք անգամ մայրենի լեզուով, նա չէ հետաքրքրվում ազգային, կամ ընդհանուր հասարակական մի որ և է երեւոյթով։

Քանի որ նա օրիորդ է, նա ցոյց է տալիս թէ հետաքրքրվում է երաժշտութեամբ, ընթերցանութեամբ, թէև ամենադարդակ, օրինակ Բօրնի պէս մի գրողի բոմաններին, մինչև անգամ փորձում է յօդուածներ գրել.... Եթէ նա աղքատ է, նա ուսուցչութեամբ և վարժուհութեամբ է պարապում,—բայց այն էլ պաշտօնապէս, միմիայն կտոր հաց ճարելու համար և ոչ թէ սիրելով իր գործը։ Նա դաստու է մի ազգային օրիորդական դպրոցում, բայց դասերի միջոցներում և դպրոցից դուրս նա խորշում է իր մայրենի լեզուով խօսելուց, չէ հետաքրքրվում հայոց ընթերցանութեամբ, չէ հետաքրքրվում առհասարակ որ և է զարգացուցիչ, կրթիչ ընթերցանութեամբ։

Էնց որ մեր օրիորդը պսակվում է, նա ամեն բան մոռանում է, որով արտաքուստ կերպով, ձեւի համար հետաքրքրվում էր։ Նրան այլ ևս չեն զբաղեցնում ոչ երաժշտութիւնը, ոչ ընթերցանութիւնը, ոչ ազգային և հասարակական գործերը։ Նա այնուհետև սկսում է ապրել անասնական կեանքով, տան անմիտ և անշարժ կեանքով, որտեղ ոչ մի կենդանի խօսք չէ լսվում այս կամ այն հասարակական օգտաւէտ գործի վրա, ազգային կամ հասարակական մի բարձր, վերացական գաղափարի վրա։ Այդ կինը ապրում է առանց որ և է իդէալների, նրան ոչինչ չէ հետաքրքրում, բացի քաղաքի բամբասանքներից, սրա կամ նրա ընտանեկան կեանքի վրա պատմածներից...

Այդ կինը անցնում է իր ամբողջ օրը տան մէջ փակված, բայց մինչև անգամ գերմանուհու պէս չէ պարապում տան տնտեսութեամբ։ Նրա զբաղմունքն է ամբողջ օր ուրիշի կեանքի վրա խօսակցութիւն, բամբասանք։ Ոչ մի գիրք կամ լրագիր չէք տեսնի նրա ձեռքում, ոչ մի հասարակ դուռ պահանջ է, մի մարդու, որի մօտ ամեն մարդկային զգացմունք մեռած է։ Բայց տեսարանի միւս կողմը դրանից ոչ աւելի պակաս հրաշածող է. կանոնիկական իրաւաբանութեան թեքուն մեկնութիւնները կարողանում են իրաւունքի մէջ անիրաւութիւն գտնել, թոյլ տալով հրէային իր պարտքը մսից հանել, բայց ոչ արիւնից, որի անունը պարտաթղթի մէջ յիշված չէր։ Բայց միա առանց արեան.—հարցի այդ կէտը, այն է իրաւունքի մէջ խարված լինելը, մի խընդիր է, որը նիւթ է տուած այժմեան նոր իրաւագիտութեան մեծ ներկայացուցիչներից մէկին մի երեւելի գրքոյկ, որը այս վերջին տարիներում բաւականին զբաղեցրեց գրականութիւնը։ Այդ հռչակաւոր գիտնականը իրաւագիտութեան պրոֆեսոր Երինգն է, որ իր Kampf ums Recht, կռիւ իրաւունքի համար բրոշիւրում պաշտպանում է այդ հարցը իր յատուկ վառվռուն, հոգեկից և ուժեղ ճարտարութեամբ։ *) Հրէան անդատաստան էր, եթէ թոյլ կը տար ինձ այդ բառը, և հասարակութեան շրջանից դուրս. բայց ինչ էք կարծում, այդ ամենասարսափելի հարուածն է, այն բոլորից, որոնց մարդուս նուրբզգաց հոգին առհասարակ զգալու ընդունակ է։

Ինչ արած, հրէան պիտի համբերէր և մինչև երբ.... թող ընթերցողը չը զարմանայ, եթէ նկատենք, որ հրէայի այն միջնադարեան դրութիւնը, որը մենք դեռ այնքան թոյլ գոյներով նկարագրեցինք, նոյնն էր մինչ մօտ ժամանակներս։ Եթէ անցեալը այնքան մեծ կապ չունենար ներկայի հետ, աւելորդ աշխատանք կը լինէր մեր բոլոր վերեւի մեկնութիւնները. բայց ոչ, նոյն դրութեան մէջն էր հրէական ազգը մինչ մեր դարը, այո, մինչ համարեա մեր օրերը։ Միայն 1815 թուականին, Վէննայի կոնգրեսի վերջին նստերում վճռվեցաւ հրէաների կրօնը ընդունել օրէնքով—բողոքական և կաթոլիկ և այլ կրօնների շարքում, և միայն այդ օրից թոյլ էր տրուած պատկը հրէաների և քրիստոնեաների մէջ գերմանական երկիրներում։ Եւ ինչ աւելի ուշադրութեան արժանին է, այդ այն հանգամանքն է, որ միայն 1869 թուականին, ուրեմն միայն 11—12 տարի առաջ, Գերմանիայում ստացան հրէաները քաղաքական իրաւունքներ հաւասար այլ գերմանական քաղաքացիների, այսինքն իրաւունք ձայնակցութեան, իրաւունք վարչական և քաղաքական պաշտօններ վարել և այլն։ Ինչ մենք ասացինք միջին դարերի համար, նոյնը, ի հարկէ աւելի թոյլ և նուազացրած դէմքով պիտի կրկնենք նաև այս դարուայ համար։

Օրէնքը—առանց գործադրութեան միայն կէս, քառորդ օրէնք է։ Կարծեմ աւելորդ է այստեղ յիշեցնել ընթերցողին, որ այժմեան հրէան, ինչ իր հոգեկան յատկութիւններին է վերաբերում, շատ չէ կարող զանազանվել մեր նկարագրած միջնադարեան հրէայից այս հասարակ պատճառով, որ նա համարեա մի և նոյն հանգամանքների մէջ է մեծացած, ինչ որ անցեալում։

Դիմենք այժմեան հրէային, որի դէմ բացած է այժմ հակահրէական շարժումը Գերմանիայում։

Այդ պատմական հայացքից յետո, բացատրութիւնները այժմ աւելորդ են. այլ կը նայենք հրէայի վրա այնպէս, ինչպէս նա է, առանց կողմնապահութեան ոչ թոյլի և ոչ զօրեղի համար։ Իբրև միակ առաջնորդ—մենք կը վերցնենք ցիչ, կրթիչ ընթերցանութեամբ։

Էնց որ մեր օրիորդը պսակվում է, նա ամեն բան մոռանում է, որով արտաքուստ կերպով, ձեւի համար հետաքրքրվում էր։ Նրան այլ ևս չեն զբաղեցնում ոչ երաժշտութիւնը, ոչ ընթերցանութիւնը, ոչ ազգային և հասարակական գործերը։ Նա այնուհետև սկսում է ապրել անասնական կեանքով, տան անմիտ և անշարժ կեանքով, որտեղ ոչ մի կենդանի խօսք չէ լսվում այս կամ այն հասարակական օգտաւէտ գործի վրա, ազգային կամ հասարակական մի բարձր, վերացական գաղափարի վրա։ Այդ կինը ապրում է առանց որ և է իդէալների, նրան ոչինչ չէ հետաքրքրում, բացի քաղաքի բամբասանքներից, սրա կամ նրա ընտանեկան կեանքի վրա պատմածներից...

Այդ կինը անցնում է իր ամբողջ օրը տան մէջ փակված, բայց մինչև անգամ գերմանուհու պէս չէ պարապում տան տնտեսութեամբ։ Նրա զբաղմունքն է ամբողջ օր ուրիշի կեանքի վրա խօսակցութիւն, բամբասանք։ Ոչ մի գիրք կամ լրագիր չէք տեսնի նրա ձեռքում, ոչ մի հասարակաց շահերը և այս հանգամանքում ի հարկէ, միայն գերմանական շահերը։

Իսկ է և մենք կարող ենք անկեղծաբար խոստովանել, որ այժմեան գերմանական հրէան բուն գերմանացուց բարոյապէս անհամեմատ ցածր է. բայց մտաւորապէս—նա գերմանացուց բարձր է։ Նախ բարոյապէս։ Երեւակայեցէք այսպիսի մի յարաբերութիւն. հրէան վայելում է այժմ Գերմանիայում բոլոր քաղաքական իրաւունքները, անխտիր կերպով. նա անուանվում է գերմանացի և խօսում է գերմանական լեզուով. իսկ միւս կողմից նա չունի գերմանական հայրենասիրութիւն, նա սրտով և հոգով չէ մասնակցում իր հայրենիքի ոչ մեծ ցաւերին և ոչ մեծ ուրախութիւններին։ Երկրի մեծ առուտուրը իր ձեռին է, ուրեմն և մեծ դումարատէրեր—հրէաներն են։ Բայց միւս կողմից, երբ 1870 թուին պատերազմ ծագեց իր երկրի և Ֆրանսիայի հետ, այդ ճգնաժամին, երբ հայրենեաց կեանքի և մահուան վճիռը պիտի կարդացվէր, այդ վսեմ բոպէին, ասում ենք, հրէան թէպէտ և անփոյթ երկուսի համար էլ, բայց ինչ և իցէ աւելի իր թշնամիների յաղթութիւնն էր ուզում—ապացոյց՝ երբ Պրուսիան պատերազմի համար հարկաւորութիւն ունեցաւ դիմել մի քանի միլիոնի փոխարկութեան—այդ փոխարկութիւնը չաջողվեցաւ չնորհիւ հրէաների յամառ դրութեան, մինչդեռ երբ Ֆրանսիան ստորագրութիւն բացաւ Գերմանիայից պահանջած հինգ միլիարդը վճարելու համար, հաւաքվեցաւ ոչ թէ հինգ, այլ 45 միլիարդ, որոնց մէջ ի թիւս այլոց, բազմաթիւ գերմանական հրէաներից ստորագրած գումարներ։ Եւ այսպէս, հրէան ոչ պատրաստ է իր արիւնը թափել և ոչ իր փողը տալ հայրենիքի մեծութեան և փառքի համար։ Աւելացրէք այժմ դրա վրա նաև այն բոլոր յատկութիւնները, որոնք թէ դիմատպէս և թէ անմիջապէս ազգային գործ։ Թիֆլիսի հայ կինը և օրիորդը իր ոգով, դաստիարակութեամբ, լեզուով հայ չէ. ամբողջ օրը՝ թէ ընտանիքում և թէ հասարակութեան մէջ հայուհին օտար լեզուով է խօսում իր շրջապատողների հետ, երբէք նրա բերանից չէք լսի մի խօսք անգամ մայրենի լեզուով, նա չէ հետաքրքրվում ազգային, կամ ընդհանուր հասարակական մի որ և է երեւոյթով։

Քանի որ նա օրիորդ է, նա ցոյց է տալիս թէ հետաքրքրվում է երաժշտութեամբ, ընթերցանութեամբ, թէև ամենադարդակ, օրինակ Բօրնի պէս մի գրողի բոմաններին, մինչև անգամ փորձում է յօդուածներ գրել.... Եթէ նա աղքատ է, նա ուսուցչութեամբ և վարժուհութեամբ է պարապում,—բայց այն էլ պաշտօնապէս, միմիայն կտոր հաց ճարելու համար և ոչ թէ սիրելով իր գործը։ Նա դաստու է մի ազգային օրիորդական դպրոցում, բայց դասերի միջոցներում և դպրոցից դուրս նա խորշում է իր մայրենի լեզուով խօսելուց, չէ հետաքրքրվում հայոց ընթերցանութեամբ, չէ հետաքրքրվում առհասարակ որ և է զարգացուցիչ, կրթիչ ընթերցանութեամբ։

Էնց որ մեր օրիորդը պսակվում է, նա ամեն բան մոռանում է, որով արտաքուստ կերպով, ձեւի համար հետաքրքրվում էր։ Նրան այլ ևս չեն զբաղեցնում ոչ երաժշտութիւնը, ոչ ընթերցանութիւնը, ոչ ազգային և հասարակական գործերը։ Նա այնուհետև սկսում է ապրել անասնական կեանքով, տան անմիտ և անշարժ կեանքով, որտեղ ոչ մի կենդանի խօսք չէ լսվում այս կամ այն հասարակական օգտաւէտ գործի վրա, ազգային կամ հասարակական մի բարձր, վերացական գաղափարի վրա։ Այդ կինը ապրում է առանց որ և է իդէալների, նրան ոչինչ չէ հետաքրքրում, բացի քաղաքի բամբասանքներից, սրա կամ նրա ընտանեկան կեանքի վրա պատմածներից...

Այդ կինը անցնում է իր ամբողջ օրը տան մէջ փակված, բայց մինչև անգամ գերմանուհու պէս չէ պարապում տան տնտեսութեամբ։ Նրա զբաղմունքն է ամբողջ օր ուրիշի կեանքի վրա խօսակցութիւն, բամբասանք։ Ոչ մի գիրք կամ լրագիր չէք տեսնի նրա ձեռքում, ոչ մի հասարա-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱԿԱ-ՀՐԷԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Երբ 16 դարուց Գերմանիայում կրկին սկսվում են նոր, մեծ տէրութիւններ կազմվել, հրէան արդէն այլ մարդ էր դարձած. նա արդէն հալած մաչված էր։ Եւ ինչ բարոյական յատկութիւններ կարող էք պահանջել մի ազգից, որը ոչ մի բան չէ ճանաչում բացի առևտրից և փող շահով տալուց, մի ազգ, որ դարերով մի ուրախ օր չէր տեսած, ոչ մի ազգային և քաղաքական վսեմ դաղափարով չէր վառված, որը իր շուրջը միշտ թշնամիներ և հալածողներ է տեսնում, որը կարծում է, և իրաւամբ, որ արդար դատաստան ասած բանը նորա համար չէ ստեղծված այս աշխարհում. մի ազգ, որի համար հոգեկան և անմեղ ընկերական զուարճութիւնը մի օտար զգացմունք է, որի ամբողջ հոգեկան կեանքը կենտրոնացած է եկեղեցական լոկ անշարժ ձեւերում և մի անցեալում, որը արդէն վաղուց մոռացած պատմութեան է պատկանում։

Ցիրաւի, ոչ մի բանաստեղծ այն հանճարեղ ոյժը չէ ունեցած հրէայի տիպարը այնպէս, ինչպէս միջին դարերի վերջերքումը մենք տեսանք, այն աստիճանի ճիշդ և բնաւորեցուցիչ գոյներով նկարագրել, որպէս Շեքսպիրը, որը 16 դարուայ վերջերքում և 17 սկզբումն էր ապրում։ Նորա Շեյլոկ կամ Վենեցիի վաճառական դրամայի մէջ դուք կը գտնէք այդ այլանդակ հրէայի տիպարը. այս հրէայի համար քրիստոնէից, Անտոնիոյի մարմնից մի ամբողջ ֆունտ միս կտրելը իր պարտքի փոխարէն՝ մի հասարակ առևտրական գործ է։ Անչուշտ, այդ հրէշաւոր մարդու պահանջ է, մի մարդու, որի մօտ ամեն մարդկային զգացմունք մեռած է։ Բայց տեսարանի միւս կողմը դրանից ոչ աւելի պակաս հրաշածող է. կանոնիկական իրաւաբանութեան թեքուն մեկնութիւնները կարողանում են իրաւունքի մէջ անիրաւութիւն գտնել, թոյլ տալով հրէային իր պարտքը մսից հանել, բայց ոչ արիւնից, որի անունը պարտաթղթի մէջ յիշված չէր։ Բայց միա առանց արեան.—հարցի այդ կէտը, այն է իրաւունքի մէջ խարված լինելը, մի խընդիր է, որը նիւթ է տուած այժմեան նոր իրաւագիտութեան մեծ ներկայացուցիչներից մէկին մի երեւելի գրքոյկ, որը այս վերջին տարիներում բաւականին զբաղեցրեց գրականութիւնը։ Այդ հռչակաւոր գիտնականը իրաւագիտութեան պրոֆեսոր Երինգն է, որ իր Kampf ums Recht, կռիւ իրաւունքի համար բրոշիւրում պաշտպանում է այդ հարցը իր յատուկ վառվռուն, հոգեկից և ուժեղ ճարտարութեամբ։ *) Հրէան անդատաստան էր, եթէ թոյլ կը տար ինձ այդ բառը, և հասարակութեան շրջանից դուրս. բայց ինչ էք կարծում, այդ ամենասարսափելի հարուածն է, այն բոլորից, որոնց մարդուս նուրբզգաց հոգին առհասարակ զգալու ընդունակ է։

Ինչ արած, հրէան պիտի համբերէր և մինչև երբ.... թող ընթերցողը չը զարմանայ, եթէ նկատենք, որ հրէայի այն միջնադարեան դրութիւնը, որը մենք դեռ այնքան թոյլ գոյներով նկարագրեցինք, նոյնն էր մինչ մօտ ժամանակներս։ Եթէ անցեալը այնքան մեծ կապ չունենար ներկայի հետ, աւելորդ աշխատանք կը լինէր մեր բոլոր վերեւի մեկնութիւնները. բայց ոչ, նոյն դրութեան մէջն էր հրէական ազգը մինչ մեր դարը, այո, մինչ համարեա մեր օրերը։ Միայն 1815 թուականին, Վէննայի կոնգրեսի վերջին նստերում վճռվեցաւ հրէաների կրօնը ընդունել օրէնքով—բողոքական և կաթոլիկ և այլ կրօնների շարքում, և միայն այդ օրից թոյլ էր տրուած պատկը հրէաների և քրիստոնեաների մէջ գերմանական երկիրներում։ Եւ ինչ աւելի ուշադրութեան արժանին է, այդ այն հանգամանքն է, որ միայն 1869 թուականին, ուրեմն միայն 11—12 տարի առաջ, Գերմանիայում ստացան հրէաները քաղաքական իրաւունքներ հաւասար այլ գերմանական քաղաքացիների, այսինքն իրաւունք ձայնակցութեան, իրաւունք վարչական և քաղաքական պաշտօններ վարել և այլն։ Ինչ մենք ասացինք միջին դարերի համար, նոյնը, ի հարկէ աւելի թոյլ և նուազացրած դէմքով պիտի կրկնենք նաև այս դարուայ համար։

Օրէնքը—առանց գործադրութեան միայն կէս, քառորդ օրէնք է։ Կարծեմ աւելորդ է այստեղ յիշեցնել ընթերցողին, որ այժմեան հրէան, ինչ իր հոգեկան յատկութիւններին է վերաբերում, շատ չէ կարող զանազանվել մեր նկարագրած միջնադարեան հրէայից այս հասարակ պատճառով, որ նա համարեա մի և նոյն հանգամանքների մէջ է մեծացած, ինչ որ անցեալում։

Դիմենք այժմեան հրէային, որի դէմ բացած է այժմ հակահրէական շարժումը Գերմանիայում։

Այդ պատմական հայացքից յետո, բացատրութիւնները այժմ աւելորդ են. այլ կը նայենք հրէայի վրա այնպէս, ինչպէս նա է, առանց կողմնապահութեան ոչ թոյլի և ոչ զօրեղի համար։ Իբրև միակ առաջնորդ—մենք կը վերցնենք

---

*) Մենք մեծաւ ուրախութեամբ կը բարեւենք այդ գրքոյկի հայերէն թարգմանութիւնը, որ 95 երեսից աւելի մեծ չէ։ Մի ազգի համար, որի մէջ իրաւունքի զգացմունքը, ինչ պատճառներով և իցէ, այն աստիճանի մեռած է, սրքան հայերի մօտ այդ նկատվում է, այդ օրինակ գրքոյկներ կարծես իսկապէս ստեղծված են։ Հայերի այժմեան քաղաքական դրութիւնը Տաճկաստանում, ահա մի ահիկ աւելի այդ փոքրիկ ձեռնարկութեան համար։

կական գաղափար, գիտութեան արգասիքներ, լուսաւորված աշխարհի նորութիւններ, իր քոյրերի ճնշված կամ ազատ դրութիւնը այլ երկիրներում նրան չեն հետաքրքրում: Տանից նա դուրս է գալիս միմիայն քիչ զբօսնելու, կամ խանութից խանութ անցնելու, ձեռնոցներ և կօշիկներ առնելու համար, որպէս զի երեկոն անցնի կլուբի պարահանդէսում....

Ահա մի անգործ, անպէտք, ապարդիւն, անշունչ կեանք.... Եւ դրանք պէտք է կրթիչներ դառնան նոր սերունդի: Ամբողջ օր անգործ, մտաւոր որ և է կեանքից զուրկ կեանք, երեկոյեան պարահանդէս կամ ընտանեկան երեկոյ կլուբում, կամ տան մէջ հիւրերի հետ դարդակ խօսակցութիւն,—միւս օր, նախընթաց օրվայ մասին խօսակցութիւն, տեսած մարդկանց կամ կանանց վրա բամբասանք և այլն այսպէս շարունակաբար.... Այսպէս անցնում են օրեր, շաբաթներ, ամիսներ և տարիներ.... այդպէս անցնում է աննկատելի կերպով ամբողջ կեանքը:

Ոչ մի կին ընդունակ չեղաւ Թիֆլիսում հիմնել մի այսպէս անուանված սալօն, որտեղ հաւաքվէին հայ ինտելիգէնցիային պատկանող երկու սեռի ներկայացուցիչներ: Ոչ մի կին ընդունակ չեղաւ կատարելապէս մոցնել իր ընտանիքում մայրենի լեզուն:

Եւ դուք կարծում էք որ Թիֆլիսեցի հայ կինը չէ հետաքրքրվում միմիայն ազգային կեանքով, մայրենի ընթերցանութեամբ: Ոչ, նա չէ հետաքրքրվում և ռուսաց գրականութեամբ, ռուսաց ամսագիրներով, ռուսաց նոր օրմաններով, նոր թատրօնական գրուածներով, այլազգի կանանց իրաւունքի, կանանց դրութեան վրա հեղինակութիւններով.... Նա կատարելապէս զուրկ է ապրում մտաւոր որ և է կեանքի նշոյլից:

Երանի թէ հայ կինը հետաքրքրվէր որ և է մտաւոր կեանքով, որ և է, թէև օտար գրականութեան ընթերցանութեամբ —այն ժամանակ, կարելի էր հաստատ ասել, որ ժամանակով նա կը հետաքրքրվի և իր ազգի կեանքով, իր մայրենի լեզուով, իր ազգային ընթերցանութեամբ:

Ահա հայ կինը, ահա այն էակը, որից մենք սպասում ենք մեր ապագայ սերունդների դաստիարակութիւնը: Նա իսկապէս իր ոգով, իր լեզուով, իր դաստիարակութեամբ, իր ձգտումներով, իր հայեացքներով և հակումներով ոչ հայ է, ոչ վրացի է և ոչ ռուս: Նա անորոշ մի արարած է: Իր կեանքի եղանակով, իր ապրելու ձևով նա ոչ արիստոկրատ է, ոչ բուրժուա, ոչ ինտելիգէնցիային պատկանող, ոչ տան տնտես, ոչ աշխատող արուեստաւոր կին է: Նա նոյն հարեմական կին է, անգործ, անփոյթ, անասնական կեանք վարող, մտաւոր կեանքից զուրկ, իդէալներից մերկ, առանց ձրգտումների, առանց կեանքի նպատակի,—միայն այն զանազանութեամբ որ այդ հարեմական կինը երեսը բաց է մանգալիս, հագնվում է եւրոպական ձևով, ազատ մտնում է մօդային խանութները և յաճախում է կլուբները:

Եւ նշանաւորն այն է որ նոր սերունդն էլ, ազգային և պետական դպրոցներում աւարտածներն էլ իրանց մայրերի նոյն փտած շաւղին են հետևում, հէնց որ ուսում վերջացնում են և պրսակվում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

Յունվարի 2

Շատ տարիներ սրանից առաջ, կաթօլիկ-հայերիս մէջ մտել էր մի սխալ համոզմունք, իբր թէ մենք իրաւունք չունենք մեր համայնքի հասարակական վէտերը հրապարակ հանել մի որ և է ազգային թերթում, որի խմբագիրը կրօնապէս բաժան էր մեզանից: Թէև մենք շատ անգամ մեզ հարց էինք տալիս, թէ ինչու օտար լրագիրները տպում են զանազան ազգերի վերաբերեալ զանազան յօդուածներ, որոնց հեղինակները պատկանում էին այլ և այլ ազգութեանց և դաւանութեանց: Բայց, այնու ամենայնիւ, չէինք վստահում հրապարակ դուրս գալ ցոյց տալու հայ-լուսաւորչականի ձեռքով հրատարակված մի լրագրում մեր հասարակական ցաւերը: Երկնչում էինք, այո, որ մի գուցէ մեր յօդուածները նորէն առիթ լինէին զանազան խռովութեանց: Եւ այս ամեն սխալ համոզմունք, ներմուծել էր մեր մէջ մեր կղերական դասը, այն նպատակով, որ համարձակ ինչ որ ցանկանայ, այն ևս գործէ: Այժմ մեր առաջև բաց է ասպարէզ հարուածելու այն բոլոր թերութիւնները, որոնք մինչև այժմ անկօնտրոլ գործում էր մեր հոգևորական դասը:

Անդրկովկասեան կաթօլիկ—հայերս մինչև 1855 թուականները բաւականին առաջադէմ էինք թէ դպրոցների և թէ եկեղեցու կողմից, որովհետև մեր հոգևոր ընդհանուր կառավարիչ գերապ. Շախուլեանը, որ նստում էր այն ժամանակ Ախալցխայ, խիստ ջերմեռանդութեամբ աշխատում էր հոգևոր դպրոցի առաջադիմութեան համար, մանաւանդ խիստ քննութեամբ էր ընտրողութիւն անում քահանայացու տիրացուներին: Այն անձն, որ չունէր յարմարութիւն այդ բարձը պաշտօնին կամ համապատասխան չէր գէթ մասամբ, ոչ կողմնակի ազդեցութիւնք և ոչ նիւթական զօրութիւնք կարող էին նորան զիջումն անել տալ, այլ նա ազգասիրաբար անարժաններին վռնդում էր և հալածում:

Իսկ երբ վախճանեցաւ հայր Շախուլեանը, նորան յաջորդեց մեր քաղաքացի հայր Աղեքս. Արարատեանը, յայտնի բան է նորա իրաւունքի տակ ընկաւ և տեղիս մեր դպրանոցը. 25 տարուց աւելի է, որ այդ դպրոցը կառավարում է հայր Արարատեանը:

Սկզբում գերապ. հայրը արիաջանութեամբ և խոհեմ ճանապարհով յառաջ տարաւ դպրոցական գործը, ուր յաճախում էին անխտիր միւս հայերի զաւակներն ևս, հէնց այդ առիթն էր, որ հայր Արարատեանը հեղինակութիւն գտաւ և ինչպէս ազգայնութեան գաղափարին հակված մի պատուելի հոգևորական նրան սիրեցին և մեծարեցին: Ափսոս, որ այդ սուրբ գործի ընթացքը շուտով փոխվեցաւ, որովհետև այդ ազգային դպրոցը վերափոխվեցաւ գիշերօթիկ դպրանոցի, ուր ազգային պատմութեան փոխանակ աւանդվեցաւ աստուածաբանութիւն և մանուկների փոխանակ ժողովեցան դիւղացի կոպիտ ու տգէտ տիրացուներ: Անձինք, որոնք միայն մարդ կոչվելու արժանաւորութիւն չունեն, ապա թէ ոչ ամեն բանի յարմարաւոր են: Այդ գոմէշները կրթվելով մի քանի տարուց զկնի անիրաւ փողի միջնորդութեամբ ստացան ուսման վկայականներ և վազեցին ուղղակի Պարատով քաղաքը, ուր նստում է ընդհանուր գերապայծառ եպիսկոպոսը: Շատ կարճ ժամանակում նոքա ստացան քահանայական սուրբ պաշտօնը, վերադառնալով այստեղ, սկսեցին դուրս տալ իրանց ուսուցչից սովորած այն քարոզները, որոնք բոլորովին հակառակ են ազգութեան շահերին:

Օրէ օր գիշերօթիկ դպրանոցում շատանալով քահանայութեան ցանկացողների թիւը, այսօր մեր գաւառի կաթօլիկ դիւղերը լիքն են այդպիսի մոլեռանդ կղերականներով, որոնք վնասում են մեր ազգային միացման ամենակարևոր գործին: Դեռ այդ բաւական չէ, եթէ մեզանից ով ոք համաձայնվեցաւ եղբայրական միութեան մասին զրոյց անել, կը յանդիմանեն և մինչև անգամ կը բանադրեն այնպիսուն: Եթէ օրէնքը ներէ, մենք հաւատում ենք, մի նոր ինկվիզիցիա էլ այստեղ երևան կը գայ: Այդ քահանացու սաների մասին անթիւ պատմութիւններ կան,

---

են ազգա—և հայրենասիրութեան պակասութիւնից: Ի հարկէ, ազգի հոգու հետ ծանօթանալու համար յարմարագոյնը նոյն շրջանի մարկանց հետ յարաբերութիւններ ունենալն է: Մենք այդ բաղդը ունեցած ենք. ասում եմ բաղդը, որովհետև իմ մի քանի հրէական բարեկամներից այնպիսի թանգագին յիշատակներ ունեմ պահած, որ ըստ երևոյթին մեզանչած կը լինեմ նրանց ազգութեան դէմ, որպէս ընդհանրութեան մի բիծը անգամ յիշելու. բայց իսկապէս այդ այդպէս չէ. նոքա իրենք պատրաստ են ձեզ մի առ մի և աւելի պպզուն գոյներով նկարագրել իրենց ազգութեան, կամ աւելի լաւ ասած՝ իրենց հաւատակիցների բոլոր պակասութիւնները: Նրանք գիտեն, որ ինչ դարերով դրոշմած է, այդ չէ կարելի մի բոպէում խորտակել: Ով դարերով անբնական շաւղով ընթացած է, և այստեղ մի և նոյնն է ինչ և ում պատճառով, դարերով անբնական կրթութիւն է ստացած, և մեր խօսքը պատմական, այսինքն ազգային և քաղաքական կրթութեան վրա է—այնտեղ ոչ մի ամենաբարձր փիլիսոփայական կրթութիւն անզօր է միանգամից արմատախիլ անել փչացած արմատը. դրան հարկաւոր է ժամանակ և լաւ բանեցրած ժամանակ: Մինթ կարծում էք թէ այս բոպէիս, եթէ դարերով հալ և մաշ արած հայը քաղաքական լիակատար ազատութիւն ստանար, նա, այդ հայը, որ սովոր է ամեն աղայի, փաշայի, ամենավերջին ոստիկանի առջև գլուխը ծռել, այդ հայը իսկոյն կը դառնայ սրտով հոգով մի ազատ մարդ? Ոչ երբէք. ոչ աւելի քան 18 դարուայ ֆրանսիացին, որը, նա ևս, արդէն մօտ երկու դար կար որ կորցրել էր իր միջնադարեան համայնքը կառավարելու իրաւունքը և դեսպօտութեան լուծի տակ խելքիցը միանգամայն դուրս էր պրծել ամենաեղ ազատութեան գաղափարը և չէր կարողանում անգամ հասկանալ թէ ինչ անասուն է ինքնավարութիւն ասած բառը: Եւ մինթէ 1789 թուականի այն աւագին և պատմութեան մէջ իր տեսակում միակ ֆրանսիական յեղափոխութիւնը կարողացաւ ֆրանսիացուն, գիւղացուն և քաղաքացուն, այն ազատ մարդը չինել, ինչպէս որ այդ հասկացվում էր նոյն ժամանակվայ Անգլիայում: Թէ որքան հաստատ էր այդ գաղափարը այն ժամանակուայ ֆրանսիացիների մօտ, այդ ցոյց տուին նրանից յետագայ անցքերը. հաղիւ անցաւ այն օրից 10—15 տարի թէ չէ, և ահա դուրս է գալիս մի բնաւորութեամբ գռեհիկ, իսկ քաջութեամբ աննման և փառասէր մի զինուոր, որը ամեն հեշտութեամբ մոռացնել է տալիս իր հայրենակիցներին և դնում նրանց երազած բոլոր ազատութիւնները իր սեփական գրպանը և սկսում իշխել ամենաինքնահեծան կերպով. և ազգը, ազատութեան անսովոր ազգը, հիացած և ապշած նայում է իր կիսաստուած կայսրին....

Այլ է դպրոցական ուսում, այլ է պատմական կրթութիւն:

Նոյնը—այժմեան գերմանական հրէաներն են: Ուման գործի մէջ սոքա սաստիկ առաջ են, և, նկատեցէք, որքան ուսումնարանը բարձր է, նոյնքան, համեմատապէս, հրէաները աւելի մեծ թըւով են ներկայացված: Ստատիստիկական որոշ տեղեկութիւններ այս բոպէիս ձեռիս տակը չունեմ, բայց նորերումս մի լրագրում կարդացի թէ պրուսական (կլասիկային) գիմնազիաների մէջ 73 հազար աշակերտներից աւելի քան $8^1/_2$ հազարը հրէաներ են, ուրեմն իններորդ մասը, մինչդեռ ոչ թէ միայն Պրուսիայի, այլ ամբողջ Գերմանիայի հրէաների թիւը պրուսական ազգաբնակութեան մօտ 45-երորդ մասն է կազմում, ուրեմն հրէաները բոլոր համեմատութիւնից դուրս աւելի միջնակարգ ուսումն առնողներ ունեն, քան այլ գերմանացիք: Ես չեմ կասկածում, որ համեմատութիւնը ևս առաւել կը լինի համալսարանների վերաբերեալ: Պատճառը պարզ է. հրէաները աւելի հարուստ են, քան միւս գերմանացիները. բայց կան դորանից աւելի զօրեղ պատճառներ ևս, որոնք հրէաների հասարակաց դրութեան հետ սերտ կապ ունեն: Մենք ասացինք, որ 1869 թուին հրէաները ստացան միւսների հետ հաւասար իրաւունքներ: Բայց մի և նոյն ժամանակ, գործնական կեանքի մէջ, մանաւանդ վարչական և զինուորական գործերի մէջ հրէաներին մեծ դժուարութիւններ են առարկում: Իբրև դաստաւոր հրէաներին հասարակ ժողովուրդը լաւ չէ ընդունում, որովհետև գիւղացին և այլն չէ ուզում խաչով աւետարանով երդվել մի մարդուն, որը խաչին և աւետարանին չէ պաշտում: Օֆիցերութեան մէջ—հրէան համարեա սիստեմատիքաբար հեռացված է, օֆիցեր նշանակելու գերմանական կայսրը անգամ իրաւունք չունի, այլ նրան ընտրում է օֆիցերական կօրպուսը, որը կայսրը միայն կարող է հաստատել կամ չը հաստատել, ինչպէս մեզանում կաթողիկոսը ունի իրաւունք միայն համայնքից ընտրված նոր քահանային հաստատել կամ չը հաստատել, բայց չէ կարող ինքը նշանակել: Բայց այդ օֆիցերական կօրպուսները, որպէս նաև տէրութիւնը ասում են, մեր օֆիցերութեան մէջ իշխում է մի յայտնի, ասպետական և քաջութեան հոգի, որը մեզ աւանդուած է մեր անցեալով, պատմութեամբ. դուք, հրէաներդ, այդ հոգին չէք ունեցել և չունէք այժմս էլ. դուք կարող էք մեր պատմական առանդութիւնները միայն պղտորել և այլն: Քաղաքական և վարչական պաշտօններում նոյն և այլ պատճառներով հրէաների մուտքը շատ դժուարացրած է. կրկնում ենք ոչ օրէնքով, այլ իրապէս: Ի՞նչ է մնում խեղճ հրէաներին, բացի ոչ պաշտոնական գործեր՝ վաճառականութիւն, որը նրանց պատմական զբաղմունքն է, լրագրութիւն և ուսումնական կեանք: Եւ իսկապէս, հրէաները այդ մի քանի բաներում Գերմանիայի համարեա թէ իշխողներն են: Փողի մէջ—նոքա են թագաւորները, լրագրութեան մէջ—նոքա են տէրերը, իսկ ուսումնականութեան մէջ նոքա ունեն շատ պատուաւոր տեղ: Այս բոպէին, կարելի է ասել Բերլինի համարեա ամբողջ պարբերական մամուլը հրէաների ձեռքերումն է: National Zeitung, Vossische Zeitung, Berliner Tageblatt, Tribüne, այս վերջինը գոնէ երկու տարի առաջ մի հրէայի խմբագրութեան ակ էր, և այլն: Եւ այդ հանգամանքը սաստիկ վիրաւորում է գերմանացու ազգասիրական զգացմունքը: Եւ նկատեցէք, միակ Բերլինում, կայսրութեան մայրաքաղաքում, այնքան հրէաներ կան, որքան ամբողջ Ֆրանսիայում, այն է մօտ յիսուն հազար: Ինչ կը վերաբերի այդ լրագիրների բարոյական որպիսութեան, ես ըստ իմ ճաշակի և գաղափարի, պիտի վկայեմ, որ նա անհամեմատ ցածր է այլ երկիրների մամուլից, գոնէ ֆրանսիական և անգլիական մայրաքաղաքների մամուլից: Աւելցնենք, որ գերմաքացիք իրանք, որոնց հետ այդ առթիւ երկար վիճաբանութիւններ ենք ունեցած, չեն ուզում այդ թոյլ տալ. բայց մեր կարծիքով, այդ պիտի վերաբերել նրանց այլ երկիրների հանգամանքների անծանօթութիւն և գուցէ մի քիչ ևս իրենց ազգասիրական կոյրութեան: Բայց այդ թողնենք, միայն թէ աւելորդ չէ գուցէ նկատել ևս, որ ոչ թէ միայն Բերլինի, այլ և առհասարակ գերմանական մամուլի մի ահագին մասը հրէաների ձեռքերումն են:—Գրականութեան և գիտութեան մէջ հրէաները նոյն բարձր գիրքն են բռնում և այդ բոլորը մեծ մասամբ այն պատճառով, որ նրանք իրենց գիտութեան համապատասխան վարչական և պետական պաշտօններ